



**ՀԱՉԱՐԱՄՅԱԿԻ
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ
ՀԻՄՆԱԳՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ**



**MILLENNIUM
CHALLENGE CORPORATION
UNITED STATES OF AMERICA**

Մամյո հաղորդագրություն

12 մարտի, 2010

ԱՄՆ կառավարության Հազարամյակի մարտահրավեր կորպորացիան 8.08 միլիոն դոլար է հատկացնում Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի վերականգնման համար

Երևան – 2010թ. մարտի 12-ին Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ Հայաստան (ՀՄՀ-Հայաստան) ՊՈԱԿ-ը պայմանագիր կնքեց Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի վերականգնման (2-րդ փաթեթի) իրականացման վերաբերյալ:

Պայմանագիրը շնորհվեց «ՄԱԳ-Ե» (Ֆրանսիա), «Բլեկ» (Ռուսաստանի Դաշնություն) և ենթակապալառու «Արտեզիա» (Հայաստան) ընկերություններից բաղկացած կոնսորցիումին՝ 8.08 միլիոն ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով: Պայմանագրի ավարտը նախանշվում է 2011թ.-ի հուլիսի 31-ը: Պայմանագիրը ստորագրվեց ՀՄՀ-Հայաստանի գրասենյակում՝ Գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանի և «ՄԱԳ-Ե» և «Բլեկ» ընկերությունների տնօրենների կողմից:

Այս պայմանագիրն իրենից ներկայացնում է Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի վերականգնման առաջին փաթեթի շարունակությունը, որը ստորագրվել է 2009 թ. դեկտեմբերին հայաստանյան Սահակյանչին ընկերության հետ: Առաջին փաթեթի պայմանագրի արժեքն է 7 միլիոն ԱՄՆ դոլար:

Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի վերականգնումը ՀՄՀ-Հայաստան ծրագրի Ենթակառուցվածք ենթածրագրի հիմնական բաղադրիչներից է: Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի վերականգնումը նպատակաուղղված կլինի Արարատի և Արմավիրի մարզերի 35 շահառու համայնքներում գյուղատնտեսական ջրերի մակարդակի իջեցմանը, կբարելավի համայնքների սոցիալական պայմանները և կնպաստի գյուղատնտեսության զարգացմանը: Դրենաժային համակարգի վերականգնման աշխատանքները ներառում են կոլեկտորների, երկրորդային և երրորդային դրենաժային ջրանցքների մաքրում և խորացում, դրենաժային համակարգի բարելավում 3 մեծ ջրանցումների (դյուկերներ) և մի շարք փոքր կառուցվածքների կառուցման միջոցով, դիմհարների վերացման և ոռոգման ալյուրտրանքային փոխարինող միջոցառումների ապահովմամբ, մի շարք արտեզյան և խորքային հորերի վերականգնում, Արարատյան հարթավայրի 3 ենթատարածաշրջաններում՝ հարավարևելյան, կենտրոնական և հյուսիսարևմտյան, դրենաժային համակարգի որոշ ենթամակերեսային դրենաժային աշխատանքներ՝ գերխոնավ հողերում հնարավորինս հավասարակշռված էկոհամակարգի պահպանման պայմաններում:

Արարատյան հարթավայրը Հայաստանի ամենամեծ գյուղատնտեսական տարածքներից է և կազմում է երկրի գյուղատնտեսական ՀՆԱ-ի 30 տոկոսը, սակայն վերջին տարիներին արտադրողականության մակարդակը կտրուկ նվազել է ջրածածկման և հանքայնացման պատճառով: Նախատեսվում է, որ համակարգի վերականգնման արդյունքում դրենաժային տարածքում կավելանա գյուղատնտեսական արտադրանքի արդյունավետությունը, կկանոնակարգվեն ստորգետնյա ջրերի մակարդակը, կնվազի բնակավայրերի ջրածածկման մակարդակը:

Մինչ 2011թ. սեպտեմբեր ամիսը Հայաստանի գյուղատնտեսության և ոռոգման ոլորտում ՀՄԿ-ի կողմից տրամադրվելիք ներդրումները կկազմեն 180 միլիոն ԱՄՆ դոլար:

Այս միջոցառման և ՀՄՀ-Հայաստան ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության ստանալու համար խնդրում ենք այցելել՝

www.mca.am

Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստանը (ՀՄՀ-Հայաստան) պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է ՀՀ կառավարության կողմից և պատասխանատու է Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի ու ՀՀ կառավարության միջև կնքված Համաձայնագրի թափանցիկ իրականացումը վերահսկելու համար: